

ձոռցիկ, եւ ըմպէին ի կարանէ ձիոց պղծոց» (140): Ապարանեցին ժե դարուն տակաւին կը յիշեցնէ Հայոց փարումը խտրականութեանց, դիտելով՝ թէ «դեռ եւս անգիտութեամբ եւ թերահաւատութեամբ են ի ներքոյ օրինականացն» (ԽԵ, 14):

Բ. Այդ շրջանի խտրելեաց մէջ ուրեմն պահուած էին միշտ հիներն ընդհանրապէս: Այսպիսի է հեղձոռցիկը՝ զոր տեսանք սա վերոյիշեալ վկայութեանց մէջ, եւ որոյ հետ նոյն կը թուի Տարօնացւոյն մեռելոտին, դատելով Շնորհալուոյն այս բացատրութենէն, «գնեղձոռցիկ մեռելոտին» (Ընդհ. 159). զի հաւանական չէ՝ թէ բուն սատակն ուտէին Ասորիք կամ ուրիշներ: Մովսէս Եզնկացին նոյնպէս անսուրբ կը դատի «գմեռելոտին» (Մվ. Եզկ.), իւր հայրենակցին հետ՝ որ կ'ըսէ. «գմեռելոտին՝ որ է մուռտառն» (Կր. Եզկ.): Տարօնացին հին ու նոր կտակարանաց կ'ապաւինի՝ հաստատելու համար՝ թէ չմորթուած անասնոց «պիղծ է միսն», եւ զայն զազանք ուտելու են՝ եւ ոչ մարդիկ (Թէոփ. 179-83): Այս կարգէն էր, եւ Ալաւկայ որդին անուտելի կը քարոզէ նեւտահար կամ զբի մէջ բոնուած որսն ալ՝ որոյ շունչն ելած է (Թ): Նոյնչափ խորշելի էր նաեւ գազանաբեկը (Մվ. Եզկ.),